

Ն Ե Ր Ք Ի Ն Տ Ե Ս ՈՒ Թ Ի Ի Ն

Անձնական նախաձեռնութիւնը հասարակական կեանքում.—Ինտելիգէն-
ցիայի դերը այդ հարցում.—Գործնականութեան ոգին եւրոպական հասա-
րակական գործիչի մէջ.—Վերացական դատողութիւնների սէրը մեր մէջ.—
„Հասարակական գիտութիւնները“ լսողներին մի խորհուրդ.—Ժողովրդա-
կան կրեդիտի կազմակերպութիւնը մեղանում.—Անձնական նախաձեռնու-
թեան օրինակներ մեր կեանքից.—Պէտք է ժողովրդին չարմարեցնել փո-
փոխուող պայմաններին.—Հայ ինտելիգէնտների նախաձեռնութիւնը ան-
ցեալում.—Գլխացական կանոնադրութիւններ.—Ընտրողական սկզբունք և
փաշայական կամայականութիւն.—Հոգաբարձութիւնը օրինական մարմին
է.—Վտանգատը էքսպերիմէնտներ.—Ընկերակցութիւնների մէջ թաղնուած
բազմակողմանիութիւնը

Եւրոպական կեանքը ընդհանրապէս առած տարբերում է
մեր կեանքից իր աչքի ընկնող կենսոճանակութեամբ, կայտա-
ռութեամբ, թափուի Եւրոպացին ոչ միայն աւելի մեծ գիտական
պաշար ունի, այլ և աւելի շատ ինքնավստահութիւն։ Անսահ-
ման մեծ է մանաւանդ նրա ինիցիատիւր կամ նախաձեռնութիւ-
նը։ Հասարակական բոլոր ասպարէզներում այնտեղ կարելի է
տեսնել անհատական ինիցիատիւր շնորհիւ կատարուած հսկայա-
կան գործեր։ Անշուշտ այդ երևոյթը բացատրւում է նրանով, որ
այնտեղ չը կան զանազան խոչընդոտներ ոչ միայն ազատ կարծիք
յայտնելու, այլ և զանազան ժողովներ գումարելու և ընկերու-
թիւններ կազմելու դէմ։ Մինչդեռ մեզ մօտ վարչական ինստիւթը
մեռցնում է մարդկանց մէջ ինքնուրոյնութիւնը, նախաձեռնող
ողին։

Սակայն, այնուամենայնիւ, որոշ սահմաններում հնարա-
ւորութիւն կայ թէ անհատական և թէ հասարակական նա-
խաձեռնութեան համար և մեղանում։ Եւ կարելի է ասել,
որ մեզ աւելի պակասում է հասարակական ոգին, քան թէ
ինիցիատիւր, որովհետև նեղ անհատական բարեկեցութեան
ուղղուած գործունէութեան մէջ, մանաւանդ հայր, բաւական
զարգացած նախաձեռնութիւն է ցոյց տալիս, այդ ընդունա-

կուլթիւնը նա բաւականաչափ ուժով չի արտայայտում մի-
միայն հասարակական նշանակութիւն ունեցող ձեռնարկու-
թիւնների մէջ: Տգիտութեան և աղքատութեան մէջ կորած
մասնայից սպասել, որ նա ինքն իրան օգնի, ըմբռնի ժա-
մանակակից կեանքի պահանջները, իր գոյութիւնը բարու-
քող նոր ճանապարհներ գտնի—նշանակում է լինել ֆա-
տալիստ: Եւրոպական աւելի աչքաբաց, աւելի զարգացած
մասնանների մէջ անգամ զանազան հանրօգուտ ձեռնարկութիւն-
ների նախաձեռութիւնը պատկանում է ինտելիգէնտ ոյժերին:
Ինտելիգէնցիան է, որ իր գիտութիւնը, իր եռանդը, իր ոգե-
ւորութիւնը դոճում է մասնայի դրութիւնը բարւոքելու հա-
մար: Հաստատ գիտակցութիւնը՝ որ հասարակական չարիքնե-
րի վերացումը մարդկանց սեփական ոյժերին է վերապահ-
ուած—ներհնչում է եւրոպացի գաղափարական ինտելիգէնտին
ինքնավստահութիւն և կայտառութիւն նրա գործունէութեան
մէջ. ոչ մի դժուարութիւն նրան չի յուսահատեցնում, որով-
հետեւ նա գիտէ տեղական պայմանների և հանգամանքների հա-
մեմատ հանճարեղ գործնականութեամբ կազմակերպել կռիւը
չարիքի դէմ: Այդ գործնականութիւնը, այդ կազմակերպական
տաղանդը մենք համարեա չունենք, երբ հարցը դուրս է
գալիս մեր անձնական շահերի սահմանից: Շատ բնորոշ է,
որ մեր ինտելիգէնտներից շատերը տարիներով ապրելով ար-
տասահմանում, ոչինչ չեն սովորում այնտեղի կեանքի դպրո-
ցից: «Հասարակական գիտութեան» թէօրիւմներով դրանք գի-
տեն ոգևորուել, իսկ թէ ինչպէս է եւրոպացին իրագործում
կեանքի մէջ այդ թէօրիւմները—մեր «փիլիսոփաներին» այդ չէ
հետաքրքրում: Եւ վերադառնալով հայրենիք մեր այդ «հասա-
րակագէտ» դպիրները իրանց առաջին պարտականութիւնն են
համարում ուսանողական նստարանից լսած «ամենապերջին»
տեսութիւնները, գիտնականութեան արտաքին բոլոր ձևերին
հաւատարիմ մնալով—ճառել, մոռանալով որ գիտութեան այը-
ուբենը չիմացող ընթերցող մեծամասնութեան համար այդ բո-
լորը այնքան արժէք ունի, որքան գիֆֆերինցիալները և ին-
տելիգիւմները՝ թուաբանութեան չորս գործողութիւնները գեո
չիմացող աշակերտի համար: Հասկանալի է, որ ոչ Մարքսը և
ոչ Էնգելսը երբեք չեն պահանջել, որ նրանց հետևողները
կորցնէին իրանց առողջ դատողութիւնը... Ի հարկէ, ան-
հրաժեշտ է իւրացնել, մարսել գիտութեան «ամենապերջին
խօսքերը», բայց պէտք է նաև իմանալ, թէ ուր ինչ է պահանջ-
ւում որոշ պայմաններում և հանգամանքներում...

Եթէ «հասարակական գիտութիւններ» լսող մեր երիտա-

սարգէները մի և նոյն ժամանակ իրանց նեղութիւն տալին ուսումնասիրել գործնականապէս թէ ինչպէս են եւրոպական կեանքի մէջ իրադրութեամբ որոշ թէօրիաներ, թէ ինչպէս են, օրինակ, մաքսառում վաշխառուների դէմ, ինչպէս են էփան կըրեղիտ, փոխատու-խնայողական, արդիւնաբերական ընկերակցութիւններ կազմակերպում հայն հայն, և ապա մեր կեանքի մէջ ևս աշխատէին գործ դնել իրանց տեսածը, չը խնայելով եռանդ ու վերցնելով իրանց վրայ ինիցիատիւր, կազմակերպելու ջանքերը—այն ժամանակ անշուշտ պղնձի ղողանջիւն չէին լինի այդ շարժական տրակտատները...

Պէտք է չը մոռանալ, որ, մանաւանդ 1895 թուականի օրէնքից յետոյ, ժողովրդական վարկի կազմակերպութիւնը Ռուսաստանում բաւական դիւրութիւններ է ստացել և այդ ուղղութեամբ գործողների համար ազատ ասպարէզ է բացուած գործադրելու իրանց թէ գիտութիւնը, թէ գործնական հմտութիւնը և թէ ինիցիատիւր: Եւ մենք տեսնում ենք որ Ռուսաստանի այն ծայրերում, ուր ժողովրդի մէջ աւելի է զարգացած հասարակական ընադդները, ուր ինտելիգենցիան աւելի գաղափարական է և նախաձեռնող—այնտեղ աւելի են տարածուած մասսայի բարօրութեանը նպաստող զանազան ձևի ժողովրդական կրեղիտի և ինքնօգնութեան կազմակերպութիւնները: Այդ կողմից Լեհաստանը, Բալտեան նահանգները կարծես տարբեր պետութեան մէջ լինէին, քան Կովկասը:

Թէ անձնական նախաձեռնութիւնը հասարակական կեանքում հազգին դեր կարող է կատարել նաև մեր կեանքում, չը նայած բոլոր աննպաստ պայմաններին, այդ երևում է մի քանի օրինակներից: Բաւական է յիշել այստեղ, որ առաջին հայոց էփանադին գրադարանը Թիֆլիսում իր գոյութեամբ պարտական է մի խումբ ինտելիգէնտ երիտասարդների և օրիորդների ինիցիատիւին *):

Միթէ թատրոնը, բարեգործական ընկերութիւնները, հրատարակչական գործը մեզանում նոյն այդ ինիցիատիւի արդիւնք չէ: Այս ուսումնական տարուանից Բագում բացուելիք «համակրթական կուրսերը» նոյն անհատական ինիցիատիւի արդիւնք չեն: Անկասկած գոյութիւն ունեցող պայմաններում աւելի մեծ տոկոսնութիւն ու եռանդ է պահանջուում մեր ինիցիատորներից, քան եւրոպականներից. բայց այդ չը պէտք է պատճառ լինի որ մեր ինտելիգենցիան ձեռները թափ տայ և «ոչինչ չի գուրս գալ» խօսքերով հանդստացնի իր խիղճը և անօգնական

*) «Մուրճ» 1890 թ. № 12. «էփանադին գրադարանի փորձը»:

թողնի դարևոր ստրկութեան մէջ հոգու ամեն մի ազատ շար-
ժում կորցրած խաւար մասսան:

Կեանքը բարդանում է, ժամանակի հետ փոխւում են
պայմանները, պահանջւում է յարմարուել այդ նոր պայման-
ներին. դրա համար պէտք է խառնիճաղանջ երևոյթների մէջ
մի ուղեցոյց, գործունէութեան նոր եղանակներ, նոր ձևեր:
Արդ, ինքը մասսան կարող է այդ անել, եթէ ինտելիգէնտը
նրան չօգնի, եթէ գրական խօսքը չը մտնի ժողովրդի խաւերի
մէջ, եթէ հրապարակախօսը չարունակի նոր սխօլաստիկայով
պարապել: Այս բոլոր հարցերի շուրջը պէտք է պտտի ինտելիգէն-
ցիայի մտածողութիւնը. նրա վրայ են ծանրաբեռնուած հասա-
րակական-ազգային հոգսերը և նա թեթևամիտ է ու յանցաւոր,
եթէ բակարայից և դիվիդենտներից դուրս բան չէ տեսնում...

Նրբ մենք յետ ենք նայում, չենք կարողանում չը խոստո-
ւանել, որ վաթսուենական և եօթանասնական թուականների
մեր ինտելիգէնցիան, չը նայած իր սակաւաթուութեան, աւելի
էր արտայայտում հասարակական բնազդներ, քան մենք: Ոչ
միայն գրական շարժումը, թատրոնը, բարեգործական ընկե-
րութիւնները, այլ և դպրոցական հարցը այն ժամանակ գրո-
տում էր բուռն եղանակներ ինտելիգէնտ խաւերի մէջ: Այդ
ինտելիգէնցիայի ինիցիատիւի շնորհիւ է, որ մեր դպրոցները
ստացան դեմօկրատիկական հիմք: Ընտրողական սկզբունքը
մտցրուեց և մեր դպրոցական կեանքի մէջ: Ժողովրդի ներ-
կայացուցիչ ինտելիգէնտները մշակեցին կանոնադրութիւններ,
որոնք հաստատուեցան սինօդից և կաթողիկոսից: Ժողովրդա-
կան մասնակցութիւնը մի հող էր, որի մէջ խոր արմատներ
պէտք է գցէր դպրոցը և անունդ առնելով այդ տեղից օրից օր
աճէր, զարգանար: Պէտք էր միայն խնամել, ժամանակին այս
կամ այն պակասը լրացնել հոգատար, քնքոյշ ձեռներով: Այդ
հողը օրինական հիմքերի վրայ էր դրած: Պօլօթենիայի 1004
յօդուածի հիման վրայ կազմած և վաթսուենական թուականնե-
րին Մատթէոս կաթողիկոսի և սինօդի կողմից հաստատած կա-
նոնադրութիւնները պէտք է նաև ապագայում յարգուէին
մեր հոգևոր իշխանութեան կողմից, իբրև ժողովրդի և հոգևո-
րականութեան մէջ կռած մի դաշն: Բացի դպրոցական հոգա-
բարձութիւնները սինօդը կարող էր ունենալ իր մօտ և մի
ուսումնական մասնաժողով, որին յանձնուած լինէր մեր դըպ-
րոցների ընդհանուր վերահսկողութիւնը: Այդ մասնաժողովը
պէտք էր նմանապէս ընտրովի լինէր. դիցուք ընտրուէր հէնց
թեմական հոգաբարձութիւններից: Մի խօսքով կարելի էր շա-

բունակ կատարելագործել ընտրողական առողջ հիմքերի վրայ դրուած դպրոցական կազմակերպութիւնը։ Որ բոլորովին օրինական էր հոգաբարձութիւնը, այդ երևում է նախ նրանից, որ սինօդը և նրա պրօկուրօրը հաստատում էին այդ կանոնադրութիւնները։ Այդ երևում է և նրանից, որ Նոր-Նախիջևանի թեմական դպրանոցի կանոնադրութիւնը հաստատուեց բարձրագոյն իշխանութիւնից։ Սակայն մեր տգէտ հոգևորականներին և դրանց հացկատակ մի քանի ինտելիգէնտ—«գործիչներին» աւելի ձեռնտու էին թիւրքական կարգերը։ Չորանք ուզում էին որ քմահաճոյքը օրէնք ճանաչուի, և ահա սկսուեցին մի շարք խաղեր և ռոնձգութիւններ ընտրողական իրաւունքի դէմ, մինչև որ կատարեալ խայտառակութեան հասցրին, դարձնելով դպրոցները ստոր կրքերի, վայրագ շահախնդրութեան, կղերական կամայականութեան կրկէս։ Հոգեւոր իշխանութեան փաշայականութեան դէմ շատ թոյլ ընդդիմադրութիւն ցոյց տուաւ ութսունական և ինսունական թուականներին մեր ինտելիգէնցիան։ Այնուհետև ամեն բան տակն ու վրայ եղաւ և վերջին տարիներս քաօսը կատարեալ դարձաւ։ Այսօր նշանակում էին հոգաբարձուներ, վաղը ընտրում։ մի օր նշանակում էին լիազօր տեսուչներ, մէկ էլ յայտնում էին որ հոգաբարձութիւնը իրաւունք ունի ինքը տեսուչ ընտրել։ Ապա մի քիչ անց յայտնում էին, որ այդ իրաւունքը պէտք է սահմանափակուի և ընտրեն անպատճառ փարաջաւորներ և անպատճառ այս կամ այն անձի ցանկալին և այլն և այլն։

Հոգեւոր իշխանութիւնը, ասիական բռնապետութիւնների նման, իշխանութեան բաժանման սկզբունք չէր ճանաչում—նա իրան ամենագէտ և ամենակարող էր յայտարարել։ Այսօր մանկավարժական ժողովի որոշման մէջ էր խառնուում, վաղը հոգաբարձութեան միաձայն վճիռը փոխում։ մի տեղ արձակած աշակերտի կողմն էր բռնում, միւս տեղ այս կամ այն բանկիրի քէֆով էր կարգադրութիւն անում և այլն և այլն։ Մի խօսքով՝ իրաւունքի, օրինաչափութեան մասին թուրք փաշայի հասկացողութիւն էր թագաւորում։ Եւ ինչ, այդ բոլոր խայտառակութիւնները անելով հանդերձ մեղադրում էին «ընտրողական սկզբունքը», ինչպէս Կրլլովի առակում հայելին էր փչրուում, որովհետև նրա մէջ երևում էր կապիկի տգեղութիւնը... Եւ ահա մի սկզբունք, որ ամեն մի ժողովրդի համար միայն առաջադիմութեան կռուանն է եղել, հայ տգէտ կղերի և նրա խնկարկող «պահպանողական» կոչուածների համար քաւութեան նոխագ է դառնում... Ի՞նչ կարելի է անել այդ մտաւոր կուրութեան և վարչական հրէշաւոր ապիկարութեան դէմ, եթէ

ոչինչ չէ կարելի անել—պէտք է ինքնաճանաչ հոգաբարձութիւնը գոնէ բողոքի նրանով, որ հրաժարուի կոյր գործիք լինելուց։ Եւ ժողովրդի առաջադիմութեան այդ գործօնի, դպրոցի, վրայ առայժմ պէտք է մեծ յոյսեր չունենալ, քանի որ հոգեւոր իշխանութիւնը իր կատարեալ իրաւունքն է համարում մեր դպրոցների գլխին զանազան վտանգաւոր էքսպերիմենտներ կատարելը...

Մենք ասացինք որ ժամանակը, պայմանները փոխուել են, կեանքը նոր պահանջներ է դնում մեր առաջ։ Մեր ինտելիգենցիան պէտք է ըմբռնի ժամանակի ոգին և ձգտի ամեն կերպ խոր մտցնել ժողովրդի մէջ զրական խօսքի ազդեցութիւնը, քարոզել, օրինակ ցոյց տալ ինքնօգնական զանազան ընկերակցութիւններ կազմակերպելու գործում, չը բաւականաւ վերացական դատողութիւններով, այլ աշխատել գործնականապէս, իրական կեանքում ստեղծել զանազան կէտերում ինքնօգնութեան օազիսներ։ Ամեն մի կօօպերատիւ ընկերակցութիւն իր մէջ արդէն պարունակում է բազմակողմանի տարրեր, մենք տեսնում ենք որ սկզբում մի աննշան սպառողական ընկերութիւն կամաց-կամաց սկսում է բարւոքել իր անդամների կեանքի ոչ միայն նիւթական կողմը, այլ և մտաւորը, էսթետիկականը... Եւ թող կենտրոններում եղած մեր ինտելիգենցիան չասի թէ չի կարող գնալ գաւառում իրագործել մեր ասածները։ Գաւառը ինքն է գալիս նրա մօտ, Բագում, օրինակ, բոլոր գաւառներից կան բանւորներ, գործակատարներ, վարպետներ, արհեստաւորներ, դրանց մէջ կատարած փորձերը բնականաբար հետեւանքներ կ'ունենան և գաւառներում։ Դժուար չէ սովորած բանը տեղափոխել նաև գաւառը և ինտելիգենտ ոյժերի հոգատարութեամբ և օգնութեամբ շարունակել սկսածը կամ սկիզբ դնել նման ձեռնարկութիւններին և ծննդավայրերում։ Այսպէս ուրեմն մեր կեանքի մէջ շատ փոփոխութիւններ կարելի է մտցնել, եթէ մեր ինտելիգենցիան, իր անձնական ինիցիատիւի որոշ մասը գործադրի հասարակական ասպարէզում, և իր կեանքում չը հետևի՝ *Sauve qui peut*—եսական գեւիղին։

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ